Հավելված 1
«ՔԶԲԿ-ԳՀԱՊԶԲ-ՊԱՐ-20/2» ծածկագրով
գնանշման հարցման ընթացակարգի հրավերի

ԴԻՄՈՒՄՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու

«Վիոլա» ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել «Քանաքեռ-Զեյթուն ԲԿ» ՓԲԸ-ի կողմից «ՔԶԲԿ-ԳՀԱՊԶԲ-ՊԱՐ-20/2» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգի
74, 107, 123-126
չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

«Վիոլա» ՍՊԸ-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:

«Վիոլա» ՍՊԸ -ի
հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 00801026
էլեկտրոնային փոստի հասցեն է՝ viola@arminco.com
գործունեության հասցեն է՝ Երեւան, Աճառյան փ. 2-րդ նրբ. թիվ 3
հեռախոսահամարն է՝ 62 80 21

Սույնով «Վիոլա» ՍՊԸ-ն հայտարարում և հավաստում է, որ՝

1) բավարարում է «ՔԶԲԿ-ԳՀԱՊԶԲ-ՊԱՐ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում.
2) «ՔԶԲԿ-ԳՀԱՊԶԲ-ՊԱՐ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ «Վիոլա» ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց և (կամ) «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս «Վիոլա» ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք.
- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)** և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ: